Խմբագրի կողմից

2023 թ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նախաձեռնությամբ տեղի ունեցան երկու խիստ կարևոր աշխատաժողովներ՝ «Իրանական մշակութային ժառանգությունը Հարավային Կովկասում» և «Հայաստան-Իրան հարաբերություններն ընդհանուր շահերի համատեքստում» խորագրերով: Բացի իրանագիտության զարգացմանն ուղղված ջանքերից, աշխատաժողովը ուներ մեկ առաքելություն ևս. հանրությանը տրամադրել արժանահավատ ու գիտական տեղեկություն, ինչի կարիքն այսօր այնքան շատ է նկատվում: Այս աշխատանքները կյանքի են կոչվել «**Հարավկովկասյան ուժային հարաբերակցության փոխակերպումը և արցախյան 2020թ. պատերազմը. Տարածաշրջանային զարգացումների միտումները՝ աշխարհաքաղաքական նոր իրողությունների ներքո**» թեմատիկ ծրագրի շրջանակներում [Գիտության Կոմիտեի՝ 21T-5F218 ծածկագրով]: Այս թեմատիկ ծրագիրն ամփոփվելու է 2023 թ.-ին՝ միջազգային գիտաժովով և կոլեկտիվ մենագրությամբ, ինչի արդյունքում հանրության դատին կներկայացվի խմբի երեք տարուց ավել իրականացրած աշխատանքները:

Աշխատաժողովի ընթացքում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտին կրկին հաջողվեց մեկ հարկի տակ հավաքել մի քանի գիտական և պետական կառույցների. ելույթով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արևելագիտության, ՀՀ ԳԱԱ արվեստի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտների գիտնականները, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոսները, ՀՀ ԱԳՆ

ներկայացուցիչները, նախկին ու ներկա դեսպաններ, ՀՀ Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ-ի Օրբելի վերլուծական կենտրոնի, ԻԻՀ մեջլիսի հայազգի պատգամավորներ, իրանցի վերլուծաբաններ:

Երկու աշխատաժողովների ընթացքում բանախոսների ընդհանուր թիրախում էր առաջին հերթին հայ-իրանական համագործակցության ակտիվությունը, համատեղ աշխատանքների իրականացումը, նմանօրինակ աշխատաժողովներով և գիտաժողովներով՝ ադրբեջանական զեղծարարությունների դուրս բերումը և հանրայնացումը: Այս մասին ՀՀ-ում ԻԻՀ նախկին դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրին, իր խոսքում կարևորելով նմանատիպ աշխատանքները, նշեց, որ «ականատես ենք լինում տարածաշրջանի ժողովուրդների պատմական փաստերի խեղաթյուրմանը, մշակութային ժառանգության ոչնչացման փորձերին: Ուրիշների պատմության չիմացությունն ու ինքնահավանությունը նշված կործանարար գործողությունների ամենակարևոր սկզբնաղբյուրներից են: Այլոց ժառանգությունը ժխտելը կամ խեղաթյուրելու փորձը հաճախ ուղեկցվում է վտանգավոր քաղաքական նպատակներով»:

ԻԻՀ 9-րդ և 10-րդ գումարման մեջլիսի պատգամավոր Կարեն Խանլարյանը, իր ելույթում կարևորելով մշակութային ճանաչողությունը՝ նշեց, որ դա երկու երկրների հարաբերությունների հիմքն է հանդիսանում: Միևնույն ժամանակ փաստեց, որ խարխլված անվտանգության համակարգում դժվար է խորացնել մշակութային կապերը: Խանլարյանը հիշեցրեց ունկնդիրներին ԻԻՀ արտգործնախարար Հ. Ամիր Աբդոլահյանի խոսքը առ այն, որ «անվտանգությունը պետք է բոլորին, այլ ոչ թե ընտրյալ մի խմբի կամ պետության». սա ըստ Խանլարյանի՝ կարևոր

ուղերձ էր տարածաշրջանի անվտանգությանը սպառնացող երկրին:

Երկրորդ աշխատաժողովը, որը տեղի ունեցավ 2023 թ. փետրվարի 9-ին՝ «Հայաստան-Իրան հարաբերություններն ընդհանուր շահերի համատեքստում» խորագրով էր: Գիտաժողովը բացվեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն պ.գ.թ. Ռ. Ղազարյանի կողմից, ով խիստ կարևորեց նմանատիպ միջոցառումների իրականացումը և դրանց շարունակական բնույթը: Ղազարյանը ի մասնավորի նշեց. «Աշխատանքային տարին մենք սկսում ենք իրանագիտական միջոցառումներով: Շատ կարևոր է մեզ համար իրանագիտական ուսումնասիրությունների զարգացումը: Չնայած նրան, որ ՀՀ և ԻԻՀ միջև ընդամենը 31 տարվա դիվանագիտական հարաբերությունների պատմություն կա, մենք չպետք է մոռանանք, որ մեր երկու ժողովուրդների, երկու պետությունների միջև այդ հարաբերություններն ունեն հազարամյակների պատմություն, և սա խորքային, քաղաքակրթական մակարդակի վրա է»: Բացման խոսքով հանդես եկավ նաև ՀՀ-ում ԻԻՀ նախկին արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրին, մասնավորապես նշելով, որ «Երկու երկրների տեսակետների ընդհանուրությունը և հիմնական շահերի համընկնումը նոր իրավիճակ են ստեղծել մեր հարաբերություններում: Երկու երկրների ղեկավարների միակարծությունն ու քաղաքական խորհրդակցությունները հասել են աննախադեպ մակարդակի: Երկու երկրների գրեթե բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ հանդիպել են իրենց գործընկերներին, և կողմերի միջև հետագա մտքերի փոխանակումը շարունակվել է տարբեր ուղղություններով: Այս գործընթացի

շարունակականությունը միանշանակ անհրաժեշտություն է»: Նրա ողջ ելույթը զետեղված է սույն աշխատանքում:

Աշխատաժողովի աշխատանքերի խիստ կարևորությունն ըմբռնելով՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը որոշեց, աշխատանքերի մի մասը հավաքել և որպես առանձին նյութ, էլեկտրոնային տարբերակով հրատարակել, որպեսզի այն նյութ դառնա հետագա քննարկումների համար:

Գոհար Իսկանդարյան, պ.գ.թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ